



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ

Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ Կոստանդյան Գայանե

Կատարող՝ Հովհաննիսյան Սյուզաննա

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

<i>Ներածություն</i>	<i>3</i>
<i>Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը կրթական համակարգում</i>	<i>4</i>
<i>Գործնական մաս</i>	<i>12</i>
<i>Եզրակացություն</i>	<i>14</i>
<i>Գրականության ցանկ</i>	<i>15</i>

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Ներկայումս ՏՀՏ-ն դարձել են արդիական կրթության հրամայական և ուսուցման նոր գործիք: Ժամանակակից կրթական համակարգերում ՏՀՏ-ն անչափ գործունակ միջոց է, որը օգնում է աշակերտներին խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների ավելի ընդգրկուն ընկալման, ստանալ ավելի բազմազան տեղեկատվություն, կիրառել ժամանակակից ինքնազնահատման և ինտերակտիվ ուսուցման մեթոդներ:

Ուսումնասիրության առարկան և նպատակը: Մեր ուսումնասիրության առարկան է ՏՀՏ կիրառումը կրթական համակարգում: Նպատակն է ցույց տալ այն մեթոդներն ու հնարները, որոնք օգտագործում է ուսուցիչը դասապրոցեսում ՏՀՏ գործիքները կիրառելիս և մատնանշել դրանց արդյունավետությունն ուսումնական գործընթացում:

Ո՞ր առանցքային կարողունակությունն է ուղղված նպատակի ուսումնասիրմանը:

- ✓ սովորել սովորելու կարողունակություն. սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում:
- ✓ թվային և մեդիա կարողունակություն. սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին:

Հետազոտական հարցը՝ Արդյո՞ք ՏՀՏ-ի օգտագործումը դասապրոցեսում, նպաստում է աշակերտների հետաքրքրության բարձրացմանը դասի նկատմամբ և խթանում է ուսուցանվող նյութի ամրապնդմանը:

Հետազոտության խնդիրները: Ներկայացնել այն դժվարությունները, որոնց առնչվում են և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները ՏՀՏ գործիքներով աշխատելիս, ընդգծել այն առավելությունները, որոնք տալիս են տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները:

Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը կրթական համակարգում

Արդի ժամանակաշրջանում մարդկային հասարակությունը մուտք է գործել տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման նոր դարաշրջան, որը կարևորագույն, կենսական դեր է կատարում նրա գործունեության բոլոր ոլորտներում: Առանց տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) մեր օրերում անհնար է պետական, հասարակական ու կրթական առաջընթացը: Գիտատեխնիկական առաջընթացը նպաստել է համակարգչային տեխնոլոգիաների զարգացմանը՝ տեղեկատվությունը դարձնելով մարդու կյանքի անբաժանելի մասը: Տեղեկատվության և հաղորդակցության արդի տեխնոլոգիաների (ՏՀՏ) զարգացման և տարածման հետ արմատական փոփոխություններ են կատարվել կրթության կազմակերպման ձևերի և միջոցների մեջ:

Մարդկության զարգացման պատմության մեջ երբևէ չեն եղել փոփոխությունների ավելի հզոր ուժ և խթան, քան տեխնոլոգիաները: 21-րդ դարում տեխնոլոգիաները փոխել են ամեն ինչ՝ մարդկանց ապրելակերպը, սնվելու ձևը, տեղափոխվելու միջոցները, հաղորդակցման ձևը և անգամ մտածելակերպը: Երեխաների մի քանի սերունդ արդեն մեծացել է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (այսուհետև՝ ՏՀՏ) միջավայրում և դրանց ակտիվ կիրառմամբ: Ընդ որում՝ մեր օրերում երեխաները շատ վաղ, դեռևս նախադպրոցական տարիքից են ընկղմվում ՏՀՏ աշխարհ: Կրթության մասնագետներն ու հետազոտողները տարբեր երկրներում ընդունում են, որ 21-րդ դարի երեխաների մոտ զարգացել է ներըմբռնում՝ ինտուիցիա, և որ նրանց ճանաչողական ու մտավոր պրոցեսները տարբերվում են նախորդ սերունդներից: Ներկայիս երեխաներին հիրավի համարում են «թվային բնիկներ», քանի որ ՏՀՏ-ի օգտագործումը ներդաշնակ և «օրգանական» է նրանց մտածողությանը, և նրանք շատ ավելի արդյունավետ են օգտագործում ՏՀՏ-ն՝ որպես ապրելու, սովորելու ու շփվելու միջոց:

ՏՀՏ-ի սրընթաց զարգացումն արդի ժամանակաշրջանում բնականաբար նոր պահանջներ է դրել նաև կրթական համակարգերի առջև ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում¹: ՏՀՏ-ը դարձել են որակյալ և արդիական կրթության հրամայական ու ուսուցման նորարարական գործիք: Ժամանակակից կրթական համակարգերում դրանք անչափ գործունակ միջոց են, որոնք խթանում են ստեղծագործ մտածողությունը, օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների առավել ընդգրկուն

¹ https://www.e-draft.am/files/project_file/1/15212679272558.

ընկալման, բարձրացնել առաջադիմությունը և հետաքրքրվածությունը, ստանալ անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև կիրառել ժամանակակից ուսուցման, գնահատման ու ինքնագնահատման մեթոդներ: ՏՀՏ-ը հնարավորություն են ընձեռում մուտք գործել մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ բազմազան նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքի ձեռքբերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները, փոփոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ: Ի վերջո ՏՀՏ-ը թույլ են տալիս ուսուցչին ու աշակերտին հաղորդակցվել միևնույն միջավայրում և նույն «լեզվով»:

«ՏՀՏ-ն ունեն նորարարության զարգացումն արագացնելու, սովորողների գիտելիքները հարստացնելու ու խորացնելու, հմտությունները զարգացնելու, ինչպես նաև նրանց մոտիվացիան բարձրացնելու և ուսման մեջ արդյունավետ ներգրավելու ներուժ: Դրանք բարելավում և կատարելագործում են ուսումնական գործընթացը և օգնում դպրոցներին վերափոխել»:² Բացի այդ, գիտական բազմաթիվ հետազոտություններ ապացուցել են, որ ՏՀՏ-ը ապահովում են կրթության մեջ հավասար և համընդհանուր ընդգրկում, բարձրացնում կրթական ծառայությունների մատուցման ճկունությունը՝ ապահովելով սովորողների ներառումն անկախ ժամանակային և աշխարհագրական խոչընդոտներից: Կրթության ոլորտը դիտարկվում է որպես երկրի կայուն զարգացման, նաև մարդկային ռեսուրսի պահպանման ու վերարտադրման նախապայմաններից: Կրթության ոլորտը ամենաբարդերից է, որն անընդհատ կատարելագործվելու կարիք ունի: Այժմ շատ կարևորվում և խրախուսվում է հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառությունը ուսումնական գործընթացում: Ուսումնական պլաններում ամիսը մեկ անգամ նախատեսված են տեխնոլոգիաների ներգրավմամբ դասեր բոլոր առարկաներից, հիմնականում դպրոցներն ունեն համակարգչային սենյակ, համացանց, ուսուցիչները ժամանակ առ ժամանակ անցնում են համակարգչային հմտությունների վերապատրաստում:

Այնուամենայնիվ, ուսուցիչների մեծ մասը ՏՀՏ-ի կիրառումը համարում է հավելյալ աշխատանք, ծանրաբեռնվածություն, որի համար նրանք նաև չեն վճարվում: Ցածր աշխատավարձը լրջագույն խնդիր է, որ ետ է պահում ուսուցիչներին նորարարությունից: Բայց առաջին հերթին ուսուցիչը պետք է հասկանա ՏՀՏ կիրառության առավելությունները և զգա, թե որքանով է այն հեշտացնում թե՛ իր աշխատանքը, թե՛ աշակերտների՝

²Davis, N.E., & Tearle, P. (Eds.). (1999). A core curriculum for telematics in teacher training. Available at: www.ex.ac.uk/telematics.T3/corecurr/teach98.htm

դարձնելով դասն առավել մատչելի, հետաքրքիր, կիրառական և աշակերտակենտրոն: SՀS-ի գործածությամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել, դրա միջոցով նաև կարող ենք ուսումնական բովանդակությունը դարձնել ինտերակտիվ: Արդյունքում, աշակերտը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն էլ կարող է փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական բովանդակությունը: Սա երեխայի մոտ զարգացնում է պատասխանատվության զգացում դասարանում, շրջապատում կա մի բան, որ կախված է իրենից:

Հայտնի է, որ մարդկանց մեծամասնությունը մտապահում է լսածի 5%-ը և տեսածի 20-ը: Ձայնային և տեսողական տեղեկատվության միաժամանակյա օգտագործումը բարձրացնում է մտապահելու ունակությունը մինչև 40-50%: Տեխնոլոգիաները մեզ հնարավորություն են տալիս ուսումնական նյութը ներկայացնել զանազան ձևերով, և հենց դրանով է ուսումնական պրոցեսն ավելի արդյունավետ դառնում: Ուսուցիչներն այս դեպքում խնայում են ոչ միայն ժամանակ, այլև հիմնարար, խորացված գիտելիք են տալիս աշակերտին, որը կպահպանվի հիշողության մեջ: Կրթական համակարգի կատարելագործումն անհնար է պատկերացնել առանց ուսուցման մեջ նոր մանկավարժական և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման, որոնք կոչված են առավել ակտիվորեն նպաստելու սովորողների մտավոր, ստեղծագործական, բարոյական և հուզական զարգացմանը: Կրթության բնագավառում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների շնորհիվ ստեղծվում է ուսումնաձանաչողական մի միջավայր, որը նպաստում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային ու զանգվածային ուսուցման տարբեր խնդիրների լուծմանը:

Կրթության գլխավոր արդյունքներից մեկը պետք է լինի անհրաժեշտ տեղեկատվությունն ինքնուրույն ձեռք բերելու, և դրանց լուծման ձանապարհները գտնելու, ստացած գիտելիքները քննադատաբար վերլուծելու և դրանք նորանոր խնդիրների լուծման համար կիրառելու կարողությունը³: Նորագույն մանկավարժական գիտական գրականության մեջ շեշտը դրվում է հատկապես SՀS նորարարությունների ներդրման վրա, որոնք նպատակաուղղված են սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացմանը, ուսման դրդապատճառների խթանմանը, նրանց ձանաչողական գործունեության ակտիվացմանը, քանի որ դրանք նպաստում են

³ Աստվածատրյան Մ.Գ., Թերզյան Գ.Հ., Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, 2004, էջ 24-26:

ուսումնական գործընթացի արագացմանը, տեղեկատվության բազմակողմանի ներկայացմանը և հաղորդմանը, ուսումնական նյութի յուրացման որակի բարձրացմանը⁴:

Վերջին շրջանում առանձնահատուկ շեշտվում է «համակարգչային մանկավարժական տեխնոլոգիաների» գաղափարը, ինչը ենթադրում է համակարգչային սարքաշարը (hardware - համակարգիչ, օժանդակ այլ սարքավորումներ), և ծրագրաշարը (software - ուսուցողական ծրագրեր, ցանցային տեխնոլոգիաներ) ուսումնական գործընթացում կիրառելու ավգորիթմի մշակում: S<S ներդրման և կիրառության տեսանկյունից ամենաբարդը (թեև, ցավալիորեն, առերևույթ ամենապարզը), իհարկե, դպրոցն է: Առայժմ ծրագրերի իրականացման առումով հենց այստեղ է նկատվում ամենամեծ աշխուժությունը: Այստեղ ներկա իրադրությունը նկարագրվում է բացառապես քանակական կողմերով. համակարգիչների թիվը համակարգչային դասարանում, քանի դպրոց ունի համակարգչային դասարան, ինտերնետային կապ և այլն: Այս փաստերի հետևում ուրիշ ոչինչ, դժբախտաբար, չկա: Որակական փոփոխությունների մասին ավելորդ է խոսել, մանավանդ որ որակական փոփոխություններ այս ծրագրերում նախատեսված չեն: Այնպիսի պարզ հարցեր, ինչպիսիք են՝ ո՞րն է համակարգչի (Ինտերնետի) դերը կրթության մեջ, եթե կա այդպիսի դեր, ինչպե՞ս պետք է գնահատվեն դպրոցները համակարգչային դասարաններով ապահովվելու աշխատանքի արդյունքները, մի՞թե հայկական դպրոցի համար առաջնահերթ խնդիրն այսօր, հայերենով էլեկտրոնային կրթական բովանդակության գրեթե իսպառ բացակայության պայմաններում, ինտերնետային կապն է, ընդհանուր առմամբ հստակ պատասխան չունեն: Այնուհետև շեշտն ակնհայտորեն դրվում է սարքերի և ինտերնետային կապի վրա, բայց գրեթե լիովին մոռացության են մատնվում ծրագրային ապահովման շատ ավելի բարդ հարցը և սրա հետ կապված բազմաթիվ խնդիրներ⁵:

Հայաստանի դպրոցական կրթության համակարգում S<S տարածման ներկա կացությունն ունի երկու բնութագրական կողմ՝ այդ ընթացքի չհամակարգվածությունը և խնդրի պարզեցված, մակերեսային ըմբռնումը: Արդեն քանի տարի դպրոցներում համակարգչային դասարանների հիմնումը, ինտերնետային կապով ապահովումը և հարակից այլ աշխատանքներ շարունակում են մնալ չհամակարգված: Նույնքան հին է համակարգման անհրաժեշտության մասին խոսակցությունը, որը հասկանալի պատճառներով որևէ արդյունքի չի հանգեցրել: Ընդհանուր առմամբ կրթության և համակարգված մոտեցման բացակայության պայմաններում որոշ միջազգային և

⁴ Аркусова И.В., Компьютерные инновации в современном высшем образовании, 2012, с. 36:

⁵ Բայադյան Հ., Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների տարածումը եվ զարգացումը Հայաստանում, Եր., 2005, էջ 83:

օտարերկրյա կազմակերպություններ իրականացրել են Հայաստանի դպրոցական կրթության համակարգի տեղեկատվայնացմանը նվիրված մի շարք ծրագրեր: Երկրորդ կողմը մասամբ կարող է համարվել առաջինի հետևանք:

«Դպրոց և S<S» իրապես բարդ, հակասություններով և երկդիմություններով հարուստ հարցն այսօր էլ Հայաստանում լավ չի ըմբռնվում, շատ բան ներկայացվում է պարզունակ ձևերով, շատ բան պարզապես անտեսվում է: Համակարգված մոտեցման՝ բոլոր մասնակիցների կողմից ընդունելի նախաձեռնողը, թերևս, կարող էր լինել երկրի կառավարությունը, և թերացումն էլ հենց նրան պիտի վերագրվի: Այդուհանդերձ, առայժմ խոսք չկա բոլոր ջանքերը միավորելու և համադրելու մասին⁶:

Այնուամենայնիվ S<S-ն այսօր մեծ դերակատարում ունի ուսումնական պրոցեսում, չնայած այն հանգամանքին, որ շատ դպրոցներում չկան համապատասխան տեխնիկական միջոցները: S<S-ները դարձել են որակյալ և արդիական կրթության հրամայական ու ուսուցման նորարարական գործիք: Ժամանակակից կրթական համակարգերում դրանք անչափ գործունակ միջոց են, որոնք խթանում են ստեղծագործ մտածողությունը, օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների առավել ընդգրկուն ընկալմանը, բարձրացնել առաջադիմությունը և հետաքրքրվածությունը, ստանալ անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև կիրառել ժամանակակից ուսուցման, գնահատման ու ինքնագնահատման մեթոդներ: Դրանք նպաստում են մանկավարժների աշխատանքի որակի բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների ու S<S հմտությունների զարգացմանը: S<S-ները հնարավորություն են ընձեռում մուտք գործել մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ բազմազան նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքի ձեռք բերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները, փոփոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ: S<S-ներն ունեն նորարարության զարգացումն արագացնելու, սովորողների գիտելիքները հարստացնելու ու խորացնելու, հմտությունները զարգացնելու, ինչպես նաև նրանց մոտիվացիան բարձրացնելու և ուսման մեջ արդյունավետ ներգրավելու ներուժ: Դրանք բարելավում և կատարելագործում են ուսումնական գործընթացը և օգնում դպրոցներին վերափոխել: Էլեկտրոնային ուսուցումը կրթական գործընթացի կազմակերպումն է ժամանակակից տեղեկատվական և

⁶ Բայադյան Հ., նշվ. աշխ., էջ 85:

հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ: Էլեկտրոնային ուսուցումը կարող է շոշափելիորեն ավելացնել սովորողների գիտելիքները, որի միջոցով մասնակիցները գործնական փորձ ու գիտելիք են ստանում համացանցից

Այդ ամենին զուգընթաց կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման համար ուսուցման մեթոդների արդիականացման անհրաժեշտությունը ունի առաջնային կարևորություն: Նորարարական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով հնարավոր է.

- ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը՝ համակցելով ուսուցման ավանդական մեթոդների հետ,
- սովորողների կողմից ուսուցանվող նյութի յուրացման դյուրինացումը և նրանց առաջադիմության ու մոտիվացիայի բարձրացումը,
- բոլոր սովորողների համար որակյալ և արդիական կրթություն ստանալու հավասար պայմանների ապահովումը՝ ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ազգային փոքրամասնություններին պատկանող, գյուղական, սահմանամերձ ու մեկուսացված բնակավայրերի և այլ խոցելի խմբերից երեխաների համար,
- դպրոցական տարիքից սովորողներին ժամանակակից S<S-ին հաղորդակից դարձնելը, դրանցով աշխատել սովորեցնելը և տեղեկատվության լայն հասանելիությունն ապահովելը,
- արդի դարաշրջանում խիստ անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների զարգացումը սովորողների մոտ, մասնավորապես՝ ստեղծագործ, քննադատական ու համակարգված մտածողության, մեդիագրագիտության, ինքնուրույն սովորելու և հետազոտական աշխատանքներ կատարելու, համագործակցային աշխատանքի և այլ հմտությունների զարգացումը,
- դասավանդողների՝ S<S պատրաստվածության, գիտելիքների և հմտությունների զարգացումը և նրանց կողմից դասավանդման գործընթացում S<S-ի ակտիվ օգտագործման ապահովումը:

Ուսումնական գործընթացում S<S գործիքների կիրառումը նոր մակարդակի կբարձրացնի ուսումնառության որակը՝ ապահովելով բոլոր սովորողների համար տարատեսակ էլեկտրոնային ռեսուրսների, համակարգչային սարքերի և համացանցային կապի հավասար մատչելիությունը⁷: Այսօր դպրոցականների կողմից S<S-ների կիրառումը իրականացվում է հետևյալ նպատակներով.

- հեռավար կրթություն իրականացնելու,

⁷ <https://lib.amedu.am/files/resource/files/2022-06-27/a02dd7f29ca161f255042619e3469101.pdf>

- տեղեկատվության ստացման և մշակման,
- տվյալների համակարգման,
- գործընթացի կամ երևույթի մոդելավորման,
- բազմաբնույթ տեղեկատվության փոխանակման, տվյալների շտեմարաններից օգտվելու,
- ուսուցման համակարգչային ծրագրերի և ուսուցման տեսալսողական միջոցների օգտագործման,
- ուսումնական գործընթացին անհրաժեշտ դիդակտիկական նյութերի ստեղծման և օգտագործման,
- տեղեկատվության որոնման և հաղորդակցման:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս աշակերտին վերարտադրողական ուսումնառությունից, որը հիմնված է մեխանիկական հիշողության վրա, անցնել արդյունավետ, էվրիստիկ-հետազոտական ուսումնառության: Արդյունքում տեղեկատվական, համաստեղծագործական կրթական միջավայրում ձևավորվում են ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերության նոր, առավել արդյունավետ ձևեր: Իհարկե, ՏՀՏ-ների կիրառումը դասագործընթացում ուսուցչից պահանջում է դասին նախապատրաստական մեծ ջանքեր և ժամանակ, քանի որ ամենօրյա դասը պլանավորելիս անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի սցենարը, նախագծել գործողությունների հերթագայումը, դասի կահավորման տեխնիկական միջոցների տեսակներն ու դրանց կիրառման նպատակահարմարությունը դասագործընթացի որոշակի փուլերում: Այս ամենի արդյունավետ իրականացման համար կարևորվում է ուսուցչի մեդիակոմպետենտությունն ու մեդիագրագիտությունը, դասավանդվող նյութի լիարժեք իմացությունը:

Մինչդեռ, այսօր ուսուցման գործընթացում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների լիարժեք ներդրման հիմնական դժվարությունն ուսուցիչների կողմից ՏՀՏ-ների կիրառման հմտությունների, մեդիագրագիտության պակասն է: Դիտարկումները ցույց են տալիս, որ տեղեկատվական տեխնոլոգիաների, տեխնիկական միջոցների օգտագործման հարցում առկա են նաև խոչընդոտող հոգեբանական գործոններ, հատկապես միջինից բարձր տարիքի ուսուցիչների շրջանում: Կրթության արդյունավետությունը միշտ էլ կախված է եղել ուսուցիչների մասնագիտական, առարկայական պատրաստվածության աստիճանից: Ուսուցիչը

SՀS-ների կիրառման պարագայում հանդիսանում է ոչ միայն տեղեկատվության, գիտելիքների, փաստերի «աղբյուր», այլև աջակցում է սովորողներին դառնալու ուսուցման գործընթացի ակտիվ սուբյեկտներ, ուղղորդում աշակերտներին ինքնուրույն փնտրել նոր տեղեկատվություն, պարզաբանել, թե գտածը արդյոք համապատասխանում է տրված պահանջներին, ինչպես նաև հասկանալու, թե այդ ինֆորմացիան ինչպես օգտագործել իրենց առջև դրված հարցերի և բարդ պրոբլեմների լուծման դեպքում⁸:

SՀS-ների կիրառումը ուսումնական գործընթացում մղում է աշակերտներին ստեղծագործական-հետազոտական գործունեության: Ուսուցման ժամանակակից մոդելներում փոխվում է նաև փոխգործակցությունն ուսուցչի հետ, նրա ակտիվությունն իր տեղն է գիջում սովորողների ակտիվությանը, քանի որ ուսուցչի խնդիրն է ստեղծել պայմաններ նրանց նախաձեռնողականության զարգացման համար: Փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառման ժամանակ սովորողները հանդես են գալիս որպես ուսուցման գործընթացի ակտիվ մասնակիցներ և նրանց փորձը պակաս կարևոր չէ ուսուցչի փորձից: Վերջինս ոչ այնքան տալիս է պատրաստի գիտելիքներ, որքան խթանում է սովորողների ինքնուրույն որոնողական գործունեությունը:



SՀS-ների կիրառումը օգնում է նաև սովորողներին կողմնորոշվել շրջապատող աշխարհի տեղեկատվական աշխարհում, տիրապետել տեղեկատվական դաշտում աշխատելու գործնական միջոցներին, զարգացնելու նրանց հմտություններն ու կարողությունները: «SՀS-ների կիրառումը ակտիվացնում է սովորողների ճանաչողական գործունեությունը, թույլ է տալիս դասերն անցկացնել բարձր գեղագիտական և հուզական մակարդակի վրա (անիմացիա, երաժշտություն), ապահովում է դիտողականությունը, ներառում է մեծ քանակությամբ դիդակտիկ նյութ, ապահովում է տարբերակված ուսուցման բարձր մակարդակ, անհատական մոտեցում յուրաքանչյուր աշակերտի՝ կիրառելով տարբեր տեսակի ու բարդության հանձնարարություններ»: Ուսումնական գործընթացում SՀS գործիքների կիրառումը նոր մակարդակի է հասցնում ուսումնառության որակը: Այսպիսով, SՀS արդյունավետ կիրառումը հնարավորություն է տալիս թվային տեխնոլոգիաները համակցել ուսուցման ավանդական մեթոդների հետ, ինչպես նաև նպաստում է ուսումնական գործընթացում հայալեզու էլեկտրոնային տարատեսակ ռեսուրսների ստեղծման օգտագործմանը:

⁸ Թորոսյան Ա., SՀS-ի արդյունավետություն կիրառումը դպրոցում, էլեկտրոնային պաշարների շտեմարան, 2012:

Գործնական մաս

Նոր տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ կատարել ենք հարցում նորագույն մեթոդների միջոցով, օգտագործելով Google Forms հարթակը: Հարցման արդյունքում ունեցանք հետևյալ արդյունքը:


https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSetkMXbjVtD0yX3Lu9o5mdZIW0QBppc77f-Pt6PkkEsa-Jwnw/viewform?usp=pp_url&entry.128678614=%D5%88%D5%B9



Ձեր կարծիքով ՏՀՏ-ի կիրառմամբ դասերն առավելություն ունեն ավանդական ուսուցման նկատմամբ:

 Copy


11 responses



Համաձայն եք, որ ՏՀՏ-ն բարձրացնում է սովորողների մոտիվացիան:

 Copy

11 responses



Ամփոփելով արդյունքները պետք է փաստել, որ ուսուցիչների 72 %-ը կիրառում է նորագույն տեխնոլոգիա դասապրոցեսի ընթացքում, տեղեկատվական տեխնոլոգիաների դերի կարևորության հարցում արդյունքները համասար էին 45,5% մեծ կարևորություն է տալիս, իսկ մնացյալ 45,5 % մասամբ է համաձայն դրա հետ, 9% կարևոր չի համարում նորագույն տեխնոլոգիաների կիրառումը: Նորագույն և ավանդական ուսուցման միջոցների վերբերյալ հարցին մեծամասնությունը` 63,6 % կողմ էր քվեարկել նորագույն տեխնոլոգիաների օգտին: Աշակերտների մոտիվացիայի բարձրացման վերաբերյալ հարցին, մեծամասնությունը ևս դրական պատասխան էր տվել` 72 %-ը: Այսպիսով ընդհանուր եզրահանգում կարելի է կատարել, որ նորագույն տեխնոլոգիաները արդեն մեծ դերակատարում ունեն ուսումնական գործընթացում:

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքի արդյունքում եկել են հետևյալ եզրահանգումներին՝

1. ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է դարձնել ժամանակակից միջոցների առկայություն՝ համակարգիչներ: Անհատական համակարգիչներով կահավորված դասարաններում կարող են կիրառվել ուսուցման ժամանակակից բազմապիսի փոխներգործուն մեթոդներ և տեխնոլոգիաներ՝ ինչպես, օրինակ, խնդրի լուծմանն ուղղված և նախագծերի վրա հիմնված ուսուցումը: Անհատական համակարգիչներով համալրված դասարանները շատ ավելի հարմար են ուսուցման ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ կիրառելու համար, քան ավանդական դասասենյակները, նույնիսկ եթե մեկ համակարգիչից օգտվում է մի քանի աշակերտ:
2. Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությամբ ուսուցումը հնարավորություն է ընձեռում առաջադրել կանխորոշվող նպատակներ և շտկել կրթական գործընթացը, ուսուցման գործընթացը դարձնել արդյունավետ: ՏՀՏ կիրառումը դասապրոցեսում հնարավորություն է տալիս սովորողներին դիտարկելի ներկայացնել նյութը, դյուրինացնել մանկավարժի աշխատանքը, սովորողների հետաքրքրվածության ուղիով բարձրացնել առաջադիմությունը:

Առաջարկություններ

1. Մանկավարժական բուհերում կրթության մեջ ՏՀՏ կիրառելու թեմայով դասընթացի ներմուծում, գործող ուսուցիչներին վերապատրաստելուն զուգահեռ, անհրաժեշտ է մանկավարժական բուհերի ուսանողներին սովորեցնել կրթության մեջ ՏՀՏ կիրառության մեթոդները, գործիքներն ու պաշարները:
2. Համակարգիչների վերաբաշխում. բացի համակարգչային սենյակից անհրաժեշտ է համակարգիչներով եւ/կամ էկրաններով զինել գրադարանները, դասասենյակները, լաբորատորիաները, այնպես որ, դրանք դառնան բոլոր առարկաների անբաժան մասը:
3. Նոր պաշարներ եւ կրթական ծրագրեր. ուսուցիչները չեն տիրապետում հետաքրքիր մուլտիմեդիա նյութերի, որոնք կարող են օգտագործել դասերի ժամանակ: Նախարարության տրամադրած ուսումնական սկավառակներն արդեն հին են, ավելի ժամանակակից, ինտերակտիվ, խաղային նյութեր են անհրաժեշտ, վիրտուալ փորձեր ու շրջապատույտներ:

Գրականության ցանկ

1. Աստվածատրյան Մ.Գ., Թերզյան Գ.Հ., Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, 2004:
2. Բայադյան Հ. , Ժամանակակից տեղեկատվական եվ հաղորդակցական տեխնոլոգիաների տարածումը և զարգացումը Հայաստանում, Եր. , 2005:
3. Թորոսյան Ա., ՏՀՏ-ի արդյունավետություն կիրառումը դպրոցում, Էլեկտրոնային պաշարների շտեմարան, 2012:
4. Аркусова И.В., Компьютерные инновации в современном высшем образовании, 2012:
5. <https://lib.armedu.am/files/resource/files/20220627/a02dd7f29ca161f255042619e3469101.pdf> -
6. Davis, N.E., & Tearle, P. (Eds.). (1999). A core curriculum for telematics in teacher training. Available at: www.ex.ac.uk/telematics.T3/corecurr/tteach98.htm
7. https://www.e-draft.am/files/project_file/1/15212679272558.